ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ
ԿԱՐԾԻՔ

Ժորա Էդվարդի Սագարյանի «Երևանի Հանրապետության հրապարակի հորինվածքային ամբողջականության ապահովման արդի խնդիրները» թեմայով
ԺԸ.00.01-«Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության **թեմայի արդիականությունը** ներկայացված է հետևյալ հիմնական դրույթների ներկայացմամբ.

Երևանի Հանրապետության հրապարակը, որը ձևավորվելով ոչ միայն որպես քաղաքի վարչական-հասարակական կենտրոն, այլ ի սկզբանե դիտարկվելով որպես վերածնվող պետության և դրա մայրաքաղաքի գլխավոր խորհրդանիշ՝ վերջին տասնամյակներում՝ անհատական շահերի հանրայինի նկատմամբ գերիշխանության և լրջագույն խնդիրների հանդեպ հանրային կարծիքի ակնհայտ անտարբերության պայմաններում, սկսել է կորցնել իր երբեմնի նշանակությունն ու որակները: Ներկայացվել է կառույցների մեծամասնության սեփականաշնորհման, հարակից գոտիների ինտենսիվ կառուցապատման, քաղաքաշինության ասպարեզի կարգավորումների անորոշության և կառավարման բացթողումների արդյունքում տեղի ունեցած հրապարակի նշանակության անկումը՝ թե՛ քաղաքի կերպարում, թե՛ քաղաքային կյանքում մասնակցության իմաստով: Ծեշտվել է քաղաքի ճարտարապետության բոլոր տեսակետներից թելադրող դերակատարության կորուստը, ավանդաբար բնորոշ ֆունկցիոնալ բազմազանությունը՝ վերածվելով տրանսպորտային հանգույցի, ինչպես աշխարհի բազմաթիվ քաղաքների հրապարակների պարագայում: Միաժամանակ կարևորվել է մայրաքաղաքի գլխավոր հրապարակի խորհրդանշական նշանակության վերականգնումը, տարբեր որակների բարձրացումը և այնտեղ լիարժեք կյանքի վերածնունդը: Ստեղծված իրավիճակում կարևորվել է խնդիրների կարգավորմանն ու քաղաքի և պետության խորհրդանիշի համապատասխան որակների վերականգնմանն ուղղված վերլուծությունների մշակման անհրաժեշտությունը:

Աշխատանքում նպատակ է դրվել ընդհանրացնել Երևանի Հանրապետության հրապարակի հորինվածքային ամբողջականության արդի խնդիրները և վեր հանել համակառույցի հետագա զարգացման առաջնահերթությունները:

Հետազոտության խնդիրներ են սահմանվել՝

- ուսումնասիրել հրապարակների առաջացման պատմությունը և ձևավորման սկզբունքները,
- ընդհանրացնել Երևանի Հանրապետության հրապարակի և հարակից տարածքների ձևավորման գործընթացը և կատարել համակառույցի ճարտարապետական զարգացման պարբերացում,
- հետազոտել Երևանի Հանրապետության հրապարակի ներկա իրավիճակը և վեր հանել ծագած խնդիրները,
- վերլուծել Երևանի Հանրապետության հրապարակի հորինվածքային ամբողջականության խնդիրները և դրանց վերաբերյալ տարբեր ժամանակներում առաջարկված լուծումները,
- վեր հանել Երևանի Հանրապետության հրապարակի անսամբլի հետագա զարգացման առաջնահերթությունները:

Հետազոտության օբյեկտն է Երևանի Հանրապետության հրապարակն ու հարակից տարածքները:

Հետազոտության սահմաններն ընդգրկում են հիմնականում Երևան քաղաքի Հանրապետության հրապարակի և հարակից տարածքները՝ 20-րդ դարի սկզբից մինչև մեր օրերն ընկած ժամանակահատվածը:

Աշխատության մեթոդաբանությունը հիմնված է թեմայի վերաբերյալ տեղական և միջազգային գիտական հրապարակումների, էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրների, արխիվային, գրաֆիկական, քարտեզագրական նյութերի և բնօրինակ ուսումնասիրությունների հիման վրա՝ տեսական հետազոտման, մոդելավորման, համեմատական վերլուծության, համակարգման, ընդհանրացման գիտականմեթոդներով

և համակարգչային ծրագրերի (Revit, AutoCAD, Adobe Photoshop, Adobe Acrobat, Microsoft Office) կիրառման վրա:

Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջին անգամ՝

- կատարվել է Երևանի Հանրապետության հրապարակի համակառույցի ճարտարապետական զարգացման պարբերացում,
- բացահայտվել և վերլուծության են ենթարկվել հրապարակի հորինվածքային ամբողջականության արդի խնդիրները,
- համակարգվել են համակառույցի զարգացման ողջ ժամանակահատվածի ընթացքում մշակված առաջարկները,
- կատարվել է բացահայտված խնդիրների և կատարված առաջարկությունների համեմատական վերլուծություն,
- մշակվել են հրապարակի անսամբլի հետագա զարգացման առաջնահերթությունները:

Հետազոտության գործնական արժեքը, կիրառական նշանակությունն ու արդյունքները՝ կարող են հիմք հանդիսանալ Երևանի Հանրապետության հրապարակի համակառույցի և հարակից գոտիների հետագա զարգացման բոլոր մակարդակի գործընթացների առաջադրանքների ձևավորման համար, ինչպես նաև կիրառվել առհասարակ հրապարակների ճարտարապետական անսամբլների բազմակողմանի խնդիրների հետազոտության և վերլուծության ասպարեզում:

Հետազոտության արդյունքները ներդրվել են հրատարակված 4 գիտական հոդվածներում, 2022-2025 թթ. ընթացքում ՃԾՀԱՀ-ի «Ճարտարապետական նախագծման և ճարտարապետական միջավայրի դիզայնի» ամբիոնում կատարված զեկուցումներում և նույն համալսարանում իրականացվող, պետբյուջեից ֆինանսավորվող «Շինարարության և ճարտարապետության գիտահետազոտական լաբորատորիայի պահպանում և զարգացում» ծրագրի աշխատանքներում:

Ատենախոսությունը կազմված է 131 էջ տեքստային մասից, որն իր մեջ ներառում է նախաբանը, հաջորդող երեք գլուխները, եզրակացությունը, 173 անուն օգտագործված գրականության ցանկը և հավելվածի տեսքով գրաֆիկական մասից՝ 37 էջ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության նպատակը, խնդիրները, տեսական և մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը, գիտական և գործնական նշանակությունը:

Առաջին գլուխում ընդհանրացվել են հրապարակների զարգացման պատմությունն ու ձևավորման առանձնահատկությունները, կատարվել է հորինվածքային վերլուծություն:

Ներկայացվել է տարբեր ժամանակաշրջանների և վայրերի հրապարակների առաջացման և զարգացման գործընթացը: Արձանագրվել է, որ ժամանակակից քաղաքային հրապարակն իր գործառական և ճարտարապետական նշանակությամբ սկիզբ է առել անտիկ շրջանից՝ պատմության ընթացքում անցնելով զարգացման տարբեր շրջաններ և կրելով մի շարք ֆունկցիոնալ և հորինվածքային փոփոխություններ: Կատարվել է հրապարակի հորինվածքի ձևավորման վրա ազդող բնութագրերի վերլուծություն՝ տարբեր օրինակների համեմատության միջոցով:

Երկրորդ գլխում քննարկվել է Երևանի Հանրապետության հրապարակի զարգացման պատմական գործընթացը՝ անդրադառնալով ձևավորման նախադրյալներին, ժամանակագրությանը, գաղափարական յուրահատկություններին, ճարտարապետությանը, նախնական մտահղացումից շեղումներին և հարակից միջավայրի ձևափոխություններին:

Ներկայացվել են Երևանի Հանրապետության հրապարակի ձևավորման պատմությունը և հորինվածքային առանձնահատկությունները և դրանց մեջ Ալեքսանդր Թամանյանի նշանակալի ներդրումը: Քննարկվել են հրապարակի հորինվածքի բաղադրիչները և դրանց ճարտարապետությունը, ճարտարապետաքաղաքաշինական նախնական մտահղացումից շեղումները, հարակից միջավայրի ձևափոխությունները: Ներկայացվել են Երևանի գլխավոր հրապարակի ճարտարապետական, ծավալատարածական ու հորինվածքային խնդիրները նախագծման և կառուցման ժամանակաշրջանում, որոնց առնչվել են Ալեքսանդր Թամանյանը և հաջորդող համահեղինակները: Ուսումնասիրվել են հրապարակի շուրջ առաջացած

ճարտարապետական, քաղաքաշինական, տրանսպորտային և միջավայրի փոփոխության խնդիրները հետխորհրդային տարիներին: Կատարվել է Երևանի Հանրապետության հրապարակի համակառույցի ճարտարապետական զարգացման պարբերացում: Ամփոփելով երկրորդ գլուխը՝ հիմնավորվել է Երևանի Հանրապետության հրապարակում ձևավորված իրավիճակի հորինվածքային անսամբլում ծագած խնդիրների դուրս բերման և վերլուծության անհրաժեշտությունը:

<u>Երրորդ գլխում</u> բացահայտվել են Երևանի Հանրապետության հրապարակի հորինվածքային ասնամբլում ներկայումս առաջացած խնդիրները, որոնք խմբավորվել են ըստ հիմնական ուղղությունների:

Համակարգվել են զարգացման տարբեր ժամանակաշրջաններում առաջացած գաղափարները, առաջարկները և նախագծային մշակումները: Կատարվել է հետազոտությունում բացահայտված և առաջարկներում դրված խնդիրների վերլուծություն, ընդհանրացում և դրանց համադրության գնահատում: Փաստվել է, որ հրապարակում ծագած խնդիրների բազմությունը ամբողջանում է հորինվածքային միասնության խախտման ընդհանրական հիմնախնդրի մեջ: Հիմնավորվել է հրապարակի կառուցվածքի հետագա զարգացման գործընթացների համար առաջնահերթությունների առանձնացման անհրաժեշտությունը: Վեր են հանվել Երևանի Հանրապետության հրապարակի անսամբլի հետագա զարգացման գործնթացի առաջնահերթությունները: Վերջին տասնամյակների ընթացքում մայրաքաղաքում լայն ծավալներ ստացած շինարարության ֆոնին կարևորվել է համակառույցի և բաց տարածության վերարժևորումը:

Եզրակացություններում ամփոփվում և ընդհանրացվում են հետազոտության արդյունքները,

Աշխատանքի վերաբերյալ կան որոշ նկատառումներ, դիտողություններ և առաջարկներ.

Բովանդակային բնույթի.

- Աշխատության մեջ կարիք է զգացվում քաղաքային միջավայրում Հանրապետության հրապարակի հայեցակարգային կարգավիճակի հստակեցման: Մասնավորապես, ինչպե՞ս է տեսնում հեղինակը հրապարակի գործառնական նշանակությունը Երևանում, որպես տրանսպորտայի՞ն, թե՞ հետիոտն առաջնայնությամբ քաղաքային միջավայր: Տարանջատվու՞մ են այս երկու ֆունկցիաները, թե գործում են զուգահեռ, ինչպես ներկայում:
- Ցանկալի կլիներ հստակ անդրադարձ կատարել քաղաքի հանրային տարածքները Հանրապետության հրապարակի միջոցով միմյանց հետ կապելու, դրանց անխոչընդոտ մատչելիության հիմնախնդիրներին:
- Ինչպե՞ս, ինչ գործիքակազմով է ակընկալվում եզրակացության մեջ նշված հրապարակի «ճարտարապետական կերպարի վերականգնումը» և «շրջապատող կառուցապատման վերակառուցումը»:

Հետազոտական բնույթի.

- Հետազոտությունը հարստացնելու նպատակով կարելի էր կատարել եվրոպական քաղաքների օրինակների վերլուծություն, որտեղ նախկինում որպես տրանսպորտային հանգույց օգտագործված հրապարակները ներկայում վերակառուցվել են հետիոտնային առաջնայնությամբ հրապարակներ:
- 2003-2013-ին վերակառուցման աշխատանքների ժամանակ բացահայտված ստորգետնյա շինությունների մնացորդների պահպանման, ցուցադրման, բացահայտման կամ վերօգտագործման հանդեպ ցանկալի կլիներ տեսնել հեղինակի անդրադարձը և դիրքորոշումը:

Կառուցվածքային բնույթի.

- Ինչպե՞ս է կատարվել արդյոք ներածության մեջ նշված «մոդելավորումը» և ի՞նչ արդյունք է տվել:

- Շենքերի հեղինակները, որոշ տեղերում բացակայում են, իսկ որոշ տեղերում շեշտադրվում, ցանկալի է բոլորին նշել՝ միտքն առավել համոզիչ դարձնելու նպատակով:

Նշված դիտողություններն ու նկատառումներն ամենևին չեն նսեմացնում ատենախոսության գիտական և գործնական արժեքը: Այն հանդիսանում է մասնագիտական պատշաճ մակարդակով կատարված ավարտուն գիտական աշխատություն, որի արդյունքները, արտահայտված հրատարակված 4 գիտական հոդվածներում, հավաստի են և համոզիչ:

Ժորա Էդվարդի Մագարյանի «Երևանի Հանրապետության հրապարակի հորինվածքային ամբողջականության ապահովման արդի խնդիրները» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին և կարող է դիտվել որպես ճարտարապետության բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծումն ապահովող գիտականորեն հիմնավորված աշխատանք, իսկ հեղինակն արժանի է ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՃՆ և ՃՄԴ ամբիոնի
ճարտ. թեկն., պրոֆեսոր՝ **Ա. Մ. Մանուկյան**

Ա.Մ. Մանուկյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՃՇՀԱՀ գիտ. քարտուղար,
տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ **Լ. Հ. Լևոնյան**

04.07.2025թ.